891.71б
Г-23

Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻՅ

# ԻՆՉ ԴԱՌՆԱԼ?

891.71Մ
Մ-23

ՊԵՏՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

-6 NOV 2011




Մեծանում եմ ես, ահա,
պարապ հո չեմ մնալու.
տասյոթ տարիս լրանա՝
ի՞նչ գործի չեմ գնալու.

ZUUՌ-Арм-ССР
Հ419-51





Չեմ անելու հարց ու փորձ,
չեմ դառնամ ատաղձագործ։

Դրանից էլ
ի՞նչ հեշտ բան.
Նախ
վերցնում ենք
մի գերան.
այդ գերանը ահագին
ամրացնում ենք դազգյահին։

Ամրացնում ենք
ու գործում,
երբ տախտակ ենք
սղոցում.

Աշխատելուց սղոցը սուր
տաքանում է, փայլում վառ.
սղոցելիս բուռն բուռ
մանրիկ թեփն է թափվում վար։



Ռանդայով մենք արդեն
այլ կերպ ենք աշխատում.
տախտակը լավ հարթել,
ռանդում ենք ու ռանդում։

Մեր ռանդան է սողում,
տաշեղներ է թողնում։

Իսկ յեթե
մեզ մի գլնդակ.
կլոր գլնդակ է պետք, —
ահա հղկիչ ճախարակ,
դրանով էլ կհղկենք։

Պատրաստում ենք ահա պես-պես
սեղանի վրա,
դարակ, չերես։

Այսպիսով ենք շինել, ահա,
այսքան աթոռ, այսքան սեղան։





ԱՏԱՂՁԱԳՈՐԾՆ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ Է.



իսկ ինժեներն՝
ել առավել·
Տուն կառուցող պիտի դառնամ,
երբ սովորեմ, յերբ մեծանամ·

Յես
նախապես
կգծեմ
մի տուն
ինչպես
յես կուզեմ.
ամենից կարևոր ե
գծագրել այնպիսի մի տուն
ինչպիսին հարկավոր ե,
ինչպես ուզում ենք
յես ու դուն։

Այս
առջևի մասն ե,
վոր կոչվում ե ճակատ.
մեր
այգին ե այս ել,
ել ինչն ե
պակաս։

Պլանն արդեն
պատրաստ ե,
գործն ե յեռում
դես ու դեն։
Ինչքան սյուներ ու պատեր
բարձրանում են վեր, շատ վեր։
Ուր դժվար ե գործը շատ
մեծ մեքենան
ինքնաշխատ
բարձրացնում ե քար ու կիր,
բարձրացնում ե փայտ, աղյուս-
դե՛, պատ շարքը, վորմնադիրը,
դու ել փայտդ տաշիր, հյուսն։

Պատ ու գերան պատրաստ են,
Թիթեղները բերեք այստեղ.—
ծածկն ել պետք ե պատրաստենք։

Այս մեր տունը
կառուցված ե
այնքան ամուր, այնքան հաստատ.
դե՛ ապրեցեք մանուկ ու ծեր,
ապրեցեք լայն, արձակ, ազատ։



ԻՆԺԵՆԵՐՆ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ Ե





Իսկ բժիշկը՝
Էլ առավել։
Յես էլ բժիշկ պիտի դառնամ,
յերբ սովորեմ, յերբ մեծանամ։

Յես
բուժում եմ
ամեն մի ցավ.
Եվ ի՞նչ գործ կա դրանից լավ։

— Այս Զանին է,
այս Յերվանդը,
Ո՞վ է ձեզանից
հիվանդը։
Ի՞նչ ես բղավում,
փորդ է ցավում։



— Ահա, մի մի ջերմաչափ,
դրեք ձեր թևի տակ.
Մանուկներն ուրախությամբ
կատարում են՝ արագ։

— Նուշիկ.
դու քեզ շատ լավ կզգաս,
թե այս դեղափոշին կուլ տաս.
այս սրվակից էլ հենց հիմի
յերկու գդալ
դեղջուր խմիր.

— Դուք
պառկեցեք.
ձեր փորին մենք
կոմպրես անենք,
որ լավանա.
դրանից
հետո,
անհոգ կլնեք,
դուք յերբեք չեք հիվանդանա։

ԲԺԻՇԿՆԵՐՆ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ ԵՆ.



իսկ բանվորներն՝

է՛լ առավել.



Ցեվ չես պետք է բանվոր դառնամ,
երբ սովորեմ, երբ մեծանամ։

Մեզ
սուլիչն է,
կանչում արագ.
ու գնում ենք մենք գործարան։

Ահագին
մարդ է հավաքվել,
մի հազար, կամ երկու հազար։
Ինչ մենակ չես կարող անել,
անում ենք ուժով ընդհանուր։



Կարող ենք
մկրատով
տաք երկաթը կտրել.
կախված մեր կռանով
ծանրություններ կրել,
հսկա շոգե մուրճով
մեծ-մեծ ռելսեր կռել.
էլեկտրական ուժով
հալել, ձուլել, ծռել.







Ամեն մի գործ, դժվար թե հեշտ,
հարկավոր է, անհրաժեշտ։

Ցես
    անցքեր եմ բացում արագ.
դու՝
    պատրաստում ես պտուտակ։
Ամբողջ
    աշխատանքը մեկտեղ
հավաքվում է
    հավաքման ցեխ։
Ամրացվում է,
    հենց այդ ցեխում.
ամեն
    մասնիկ
իրար
    տեղում։





Մի տեղ
    ծուխ է,
մին՝
    թրնդյուն է,
Ցրն —
    ցրվում է
ամբողջ
    տունը։
Ու տես
    ինչպես
թշշան,
    փշշան
շոգեքարշը
    սողաց դռնից,
    որ տանի
        հեգ,
տուն տանի
    ինձ։



ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ Է.





Իսկ տրամվայում՝
ել տաավեր
Յես պետք ե կոնդուկտոր դառնամ,
յերբ սովորեմ, յերբ մեծանամ։

Տրամվայով
կոնդուկտորը,
կաշվե պայուսակը ուսից,
ամբողջ քաղաքն՝
ամբողջ օրը
շրջելու յե, յեթե ուզի։



— Փոքրիկներ, մեծեր,
տեսնեմ տոմսը ձեր
Նոր եք տոմս ուզում,
վճր տոմսը տամ,՝ ու՞մ,
կարմի՞րը՝
կանաչը, դեղի՞ն
Նայած ձեր ուզած տեղին։







Գնում ենք ռելսերով՝
քաղաքից դուրս ենք։
— Իջնե՞լ ես ուզում․
տրամվայից
դուրս յեկ։



ԿՈՆԴՈՒԿՏՈՐՆ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ Ե,







Իսկ շոֆերը՝

Էլ առավել.

Ու չես պետք է շոֆեր դառնա
երբ սովորեմ, չերբ մեծանամ։



Փռնչում է մեքենան սրընթաց
Թռչում է, սահում,
շոֆեր եմ լավ, աչքաբաց,
ով է իմ առաջն առնում։





Միայն ասա ինձ.
Ուր ես ուզում դու.
այս ճամբով անգիծ
քեզ թռցնեմ
տուն։

Սու.
լում ենք.
սու—
րում ենք.
հայպ,
գո՛ւ,
ճամբա՛
տո՛ւր...







ՇՈՖԵՐՆ ԱՆՇՈՒՇՏ ԼԱՎ Է.





Իսկ սավառնորդն՝

Էլ առավել։

Յես սավառնորդ պիտի դառնամ,
Երբ սովորեմ, յերբ մեծանամ։

Բակը բենզին եմ լցնում
ու լարում եմ պրոպելլեր.
«մոտոռ, թռիր, թռցրու,
ուզում եմ յերկինք յելնել»։





Չեք վախեցնի դուք ինձ
անձրևից

ու կարկուտից։
Թռչում եմ. անվեհեր
Թռչող ամպից էլ վեր.
Ճայի հետ եմ գրազով՝
Թռչել ծովի վրայով։
Ինչքան էլ լինի սառը՝
անցնելու յեմ մեծ սարը

«Մոտոռ, մոտոռ

Թռցրու,
մեզ մինչև լուսինն

ու աստղերը հասցրու.
չնայած նրանք,

ՀՍՍՌ-Арм·ССР



վերը
մեզնից փոքրա՞ն են հեռու»:
Սավառնորդն անշուշտ լավ է,
կարմիր նավաստին՝
է՛լ առավել:



Ես նավաստի պիտի դառնամ,
յերբ սովորեմ, յերբ մեծանամ:
Տուրջը գլխարկիս
ժապավեն կարած,
կապույտ օձիքիս
խարիսխ նկարած,—
Ես ճամփա յեմ ընկնում ծովով
ճամփորդելու հսկա նավով·



Զուր եք, զուր ե՛ք, ալիքնե՛ր
մեր մեծ նավը ճոճում,
ահա կայմին եմ կանգնել,
անվախ, ինչպես թռչուն:
Հանձնվեցե՛ք, քամիներ,
փոթորիկ քաոսային·
գնում եմ
հարավային
բևեռ,
այնտեղից՝
հյուսիսային:









Ահա միտքը վերջացավ,
դու միտք արա, տե՛ս,
վո՞ր աշխատանքն է լավ.—
—Այն է լավ,
վորը կընտրես:

ՀՍՍՌ-Арм-ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0395232

ԳԻՆԸ՝ 80 Կ.

ՊԱՏ. 3580 ՏԻՐԱԺ 3000
ԳՐԱՌ. 8007(Բ) ՀՐԱՏ. 2438

4005